

**Giorgio Agamben**

Stato di eccezione – *Homo sacer*, II, 1

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ

[Զորջո Ագամբենի *Stato di eccezione* գիրքը լոյս տեսած է 2003ին (Bollati Boringhieri, Թորինո): *Homo sacer – Գերիշխան տիրակալութիւնը եւ մերկ կեանքը* գիրքին բացած նանապարհին վրայ երկրորդ հանգրուանն էր: *Homo sacer*-ի հայերէն թարգմանութիւնը կայ հրապարակին վրայ (Ինքնագիր գրական ակումբ, Երեւան, 2020): *Stato di eccezione*-էն առաջ լոյս տեսած էր *Quel che resta di Auschwitz*, որուն հայերէն թարգմանութիւնն ալ նոյնպէս հայերէն լեզուով տրամադրելի է, *Մնացորդ՝ Աւշուիցի* վերնագրով (Ակտուալ Արվեստ, 2020):

Հիմա *Homo sacer* ընդհանուր վերնագիրով ամբողջ շարք մը կազմուած է, որուն մէջ մեր այս *Stato di eccezione* վերնագիրով երեւցած գիրքը կու գայ առաջին հատորէն անմիջապէս ետք, եւ ուրեմն կը կրէ II, 1 թիւը: Հոս մեր հրամցուցածը այդ գիրքին չորրորդ գլուխն է: Վերջաւորութեան դրուած է խմբագրական ծանօթագրութիւն մը, եւ ցանկը այն հատորներուն՝ որոնց կը յղէ հեղինակը իր շարադրանքին մէջ:

Թարգմանիչն է՝ Մինաս Լուռեան, իսկ խմբագիրի դերին մէջ՝ Մարկ Նշանեան]

### (4.) ՀՍԿԱՅԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԴԱՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԸ ՇՈՒՐՋ

4.1. Այս դիտանկիւնէն է, որ այժմ պիտի կարդանք բանավէճը ընդմէջ՝ Վալթեր Բենիամինի եւ Քարլ Շմիթի, արտակարգ իրավիճակի առնչութեամբ: Տարբեր ձեւերով եւ ուժգնութեամբ, 1925-էն 1956 տարիներու երկայնքին կայացած այս բանավէճի հանրայնացուած թղթածրարը այնքան ալ ծաւալուն չէ. *Քաղաքական աստուածաբանութեան* գիրքէն Բենիամինին կատարած մէջբերումը *Գերմանական պարոք տոսմային ծագումը* աշխատութեան մէջ, 1928-ի իր *կենսագրութիւնը* ու *Դեկտեմբեր 1930-ին՝ Բենիամինի նամակը Շմիթին* յղուած – որոնք իր հետաքրքրութիւնն ու հիացումը կը վկայեն «դատաիրաւական ֆաշիստ հրապակախօս»ին նկատմամբ (Tiedemann, in Benjamin, *GS*, հատոր I.3, էջ 886)<sup>1</sup>, եւ որոնք միշտ մեծ գայթակղու-

<sup>1</sup> Տե՛ս վերջաւորութեան գետեղուած մատենագիտութիւնը:

թիւն պատճառած են: Շմիթի կողմէ կան Բենիամինին յղուող մէջբերումներն ու ակնարկները իր *Hamlet oder Hekuba* գործին մէջ, երբ հրեայ փիլիսոփան արդէն իսկ 16 տարի է՝ մահացած էր: Այս թղթածրարը աւելի ծաւալուն կը դառնայ շնորհիւ 1988-ին հրատարակուած՝ Շմիթի ու Վիգելի միջեւ 1973 թուականի թղթակցութեան, ուր Շմիթ կը հաստատէ որ 1938-ին լոյս տեսած իր Հոբբսին յատկացուած գիրքը յղացուած էր իրր «պատասխան՝ Բենիամինի [...], սակայն մէկը չէ նկատած» (Viesel, 1988, էջ 14. տես՝ Բրեդեմպֆամփի նշումները, Bredekamp, 1998, էջ՝ 913):

Ծածուկ թղթածրարը աւելի ընդարձակ է սակայն եւ տակաւին յաւելեալ ուսումնասիրութեան կը կարօտի, իր բոլոր հաւանական հետեւանքներով: Պիտի փորձենք արդարեւ ապացուցել, որ իրր առաջին փաստաթուղթ պէտք է թղթածրարին մէջ ներառուել ո՛չ թէ *Քաղաքական աստուածաբանութիւն* գիրքին ընթերցումը Բենիամինի կողմէ, այլ՝ 1921-ին լոյս տեսած իր *Բրտութեան քննադատութեան* նուիրուած ուսումնասիրութեան ընթերցումը Շմիթին կողմէ: Ուսումնասիրութիւնը լոյս տեսած էր «Archiv für Sozialwissenschaften und Sozialpolitik» պարբերականի 47րդ թիւին մէջ, հանդէս մը որուն համատեղ ղեկավարն էր՝ Էմիլ Լեդերէր, այդ ժամանակ Հայդելբերգի համալսարանի (աւելի ուշ, Նիւ Եորքի New School for Social Research-ի) դասախօս, որ այդ շրջանին Բենիամինի յաճախած շրջանակին մաս կը կազմէր: Արդ, ոչ միայն 1924-ի եւ 1927-ի միջեւ Շմիթ բազմաթիւ ուսումնասիրութիւններ ու յօդուածներ հրապարակած է «Archiv»-ի թիւերուն մէջ (որոնց շարքին՝ *Քաղաքականի յղացք*ին առաջին տարբերակը), այլեւ իր գրութիւններու ծանօթագրութեանց եւ մատենագիտութեանց աւելի մանրակրկիտ հայեացք մը, 1915 թուականէն սկսեալ, ցոյց կու տայ որ Շմիթ կանոնաւոր կերպով կը կարդար հանդէսը (ի մէջի այլոց՝ կը նշէ Բենիամինի ուսումնասիրութիւնը պարունակող պրակին անմիջապէս նախորդող եւ յաջորդող թիւերը): Որպէս «Archiv»-ի յարատեւ ընթերցող ու գործակից, դժուար թէ Շմիթ կարենար նկատած չըլլալ՝ *Բրտութեան քննադատութեան* նուիրուած գրութեան մման գործ մը, որ ինչպէս պիտի նկատենք՝ իրեն համար էական հարցեր կ'արծարծէր: Գերիշխանութեան շմիթեան ուսմունքին հանդէպ Բենիամինի հետաքրքրութիւնը միշտ գայթակղեցուցիչ նկատուած է (1930-ին Շմիթին յղած նամակը առիթով մը Թաուբէս կը բնորոշէ որպէս «ոմմբ մը, որ կրնար պայթեցնել Վայմարի մտաւորական պատմութեան հասարակաց պատկերացումը» (Taubes, 1987, էջ 27). գայթակղութեան եզրերը շրջելով, պիտի փորձենք գերիշխանութեան շմիթեան տեսութիւնը կարդալ որպէս պատասխան՝ բրտութեան ուղղուած Բենիամինեան քննադատութեան:

4.2. Բենիամինի ուսումնասիրութեան նպատակն է՝ ապահովել բացարձակօրէն իրաւունքէն «դուրս» (*außerhalb*) եւ «անդին» (*jenseits*) գտնուող բրտութեան մը կարե-

լիութիւնը (գերմաներէն բառը՝ *Gewalt* պարզապէս նաեւ «իշխանութիւն» կը նշանակէ), որ իբր այդ կարենայ խորտակել տրամախոհութիւնը ընդմէջ՝ օրինադրական բրտութեան եւ օրինապահական բրտութեան (*rechtsetzende und rechtserhaltende Gewalt*): Բրտութեան այս միւս կերպը Բենիամինի կողմէ բնորոշուած է որպէս «գուտ» (*reine Gewalt*) կամ՝ «աստուածային», իսկ մարդկային միջավայրէ ներս՝ «յեղափոխական»: Ինչ որ իրաւունքը որեւէ կերպով չի կրնար թոյլատրել, ինչ որ սպառնալիք կը նկատէ, որուն հետ անկարելի է որ հաշուի նստի, իրաւունքէն դուրս բրտութեան մը ներկայութիւնն է. եւ այս՝ ո՛չ թէ որովհետեւ նման բրտութեան մը նպատակները իրաւունքին հետ ներհակ են, այլ՝ «իր սոսկ առկայութեամբ իրաւունքէն դուրս» (Benjamin, 1921, էջ 183): Բենիամինի քննադատութեան նպատակն է նման բրտութեան մը իրականութիւնը (*Bestand*) փաստել. «եթէ իրաւունքի աշխարհէն իսկ անդին՝ բրտութեան գոյացումը ապահովուէր իբր գուտ անմիջական բրտութիւն, ատով՝ կը փաստուէր թէ յեղափոխական բրտութիւն մը կարելի՛ է, ընդունելով որ այդ անունը կը նշէ մարդոց մէջէն բխելիք գուտ բրտութեան մը բարձրագոյն յայտնագործութիւնը» (անդ, էջ՝ 202): Այս բրտութեան յատուկ նկարագիրը այն է որ ան ո՛չ օրինադրական է, ո՛չ ալ օրինապահական, այլ՝ իրաւունքը վերացնող (*Entsetzung des Rechts* [անդ]) եւ այսպէս սկիզբը կը դնէ պատմական նոր ժամանակաշրջանի մը:

Ուսումնասիրութեան մէջ Բենիամին չ'անուաներ արտակարգ իրավիճակը, թէեւ կ'օգտագործէ *Ernstfall* եզրը, որ Շմիթի մօտ կը յայտնուի *Ausnahmezustand*-ի իբր հոմանիշ: Սակայն շմիթեան բառամթերքի մասնագիտական այլ եզր մը ներկայ է գրութեան մէջ — *Entscheidung*, որոշում: Իրաւունքը, կը գրէ Բենիամին, «որոշումը կը նանչնայ իբր բնագանցական ստորոգութիւն, տեղական ու ժամանակաւոր սահմանումով» (անդ, էջ՝ 189). սակայն իրականութեան մէջ այս որոշումին կը համապատասխանէ միայն «իրաւական բոլոր հարցերուն վերջնական անորոշելիութեան տարօրինակ եւ առաջին ակնարկով բարոյալքող փորձառութիւնը» [*die seltsame und zunächst entmutigende Erfahrung von der letztlichen Unentscheidbarkeit aller Rechtsprobleme*] (անդ, էջ՝ 196):

4.3. Գերիշխանութեան ուսմունքը զոր Շմիթ կը գործադրէ իր *Քաղաքական աստուածաբանութեան* մէջ, կրնայ ընկալուիլ որպէս պատասխան՝ Բենիամինի աշխատասիրութեան: Մինչ *Բրտութեան քննադատութեան* ռազմավարութիւնը կը միտէր ապահովել գուտ եւ օրինագուրկ բրտութեան մը առկայութիւնը, Շմիթի համար կարեւոր էր նման բրտութիւն մը տեղաւորել իրաւական շրջածիրի մը մէջ: Արտակարգ իրավիճակը այն տարածքն է, ուր ան կը փորձէ որսալ գուտ բրտութեան մը բենիամինեան գաղափարը եւ վերահաստատել ապօրինութիւնը՝ *nomos*-ի իսկ կառոյցին մէջ: Ըստ Շմիթի, չի կրնար գուտ բրտութիւն մը գոյութիւն ունենալ, որ իրաւունքէն

բացարձակապես դուրս ըլլայ, քանզի արտակարգ իրավիճակի պարագային՝ ան իրաւունքին մէջ ներփակուած է իր արտաքուստովն իսկ: Արտակարգ իրավիճակը ուրեմն այն տրամադրիչն է, որուն միջոցաւ կը պատասխանէ Շմիթ ամբողջովին օրինագուրկ մարդկային արարքի մը բենիամինեան հաստատումին:

Երկու գրութիւններուն միջեւ կապը սակայն շատ աւելի սեղմ է: Տեսանք թէ ինչպէս *Քաղաքական աստուածաբանութեան* մէջ Շմիթ կը լքէ սահմանադիր իշխանութեան եւ սահմանադրուած իշխանութեան զանազանումը, որ 1921-ի գիրքին մէջ գերիշխան բռնապետութիւնը կը հիմնէր, ու զայն կը փոխարինէ որոշումի յղացքով: Այս փոխարինումը ռազմավարական իմաստ կը ստանայ այն ատեն միայն՝ երբ ան նկատուի իբր բենիամինեան քննադատութեան դէմ ուղղուած հակազդեցութիւն: Օրինադրական բրտութեան եւ օրինապահական բրտութեան միջեւ զանազանումը — որ Բենիամինի նիւթն էր — ի հարկէ՝ ամբողջովին կը համապատասխանէ շմիթեան հակադրութեան. եւ սահմանադիր իշխանութեան ու հաստատուած իշխանութեան տրամախոհութենէն ձերբազատած՝ զուտ բռնութեան մը նոր պատկերը չէզոքացնելու համար է, որ Շմիթ կը մշակէ գերիշխանութեան իր տեսութիւնը: Գերիշխան բրտութիւնը *Քաղաքական աստուածաբանութեան* մէջ կը պատասխանէ բենիամինեան ուսումնասիրութեան զուտ բրտութեան, իշխանութեան մը կերպարով որ ո՛չ օրինադրական է, ո՛չ ալ օրինապահական, այլ կ'անկախէ օրէնքը: Նոյնպէս Բենիամինի կողմէ պաշտպանուած դրոյթին — որուն համաձայն իրաւական բոլոր հարցերը վերջին հաշուով՝ անորոշելի են —, պատասխան մըն է Շմիթին տուածը, երբ կը ներկայացնէ գերիշխանութիւնը որպէս ծայրագոյն որոշումին վայրը: Այս վայրին՝ իրաւունքէն ոչ դուրս, ոչ ալ ներս ըլլալը, առաւել՝ գերիշխանութեան այս իմաստով *Grenzbegriff* մը ըլլալը անհրաժեշտ հետեւանքներն են շմիթեան փորձին՝ զուտ բռտութիւնը չէզոքացնելու եւ ապօրինութեան ու իրաւական շրջարկին միջեւ կապը ապահովելու: Եւ ինչպէս զուտ բրտութիւնը, ըստ Բենիամինի, իբր այդ չի կրնար նանչցուիլ որոշումի մը միջոցաւ (*Entscheidung* [անդ, էջ՝ 203]), նոյնպէս Շմիթին համար «կարելի չէ ստուգել ամենայն յստակութեամբ, թէ ե՛րբ կայ անհրաժեշտութեան մը պարագան, եւ ոչ իսկ կարելի է նկարագրել բովանդակութեան տեսակէտէ թէ ի՛նչ կրնայ պատահիլ, երբ իսկապէս գործ ունինք անհրաժեշտութեան պարագայի մը եւ անոր ջնջումին հետ» (*Schmitt, 1922, p. 12*): Բայց ռազմավարական շրջումով մը՝ նիշդ այդ անկարելութիւնն է, որ կը հիմնաւորէ գերիշխան որոշումին անհրաժեշտութիւնը:

4.4. Եթէ այս նախդրեալները ընդունուին, այն ատեն՝ Բենիամինի ու Շմիթի միջեւ ամբողջ հանրայնացուած բանավէճը նոր լոյսի տակ կը յայտնուի: *Trauerspielbuch*-ին մէջ պարոք գերիշխանի Բենիամինեան նկարագրութիւնը կրնայ ընկալուիլ որպէս

պատասխան՝ շմիթեան գերիշխանութեան տեսութեան: Սամ Վեբըրը նրբամտութեամբ նկատած է, թէ ինչպէս շմիթեան գերիշխանութեան սահմանումը նշած պահուն՝ Բենիամին «թեթեւ եւ սակայն վնասական փոփոխութիւն» մը կը ներմուծէ (Weber, 1992, p. 152): Գերիշխանութեան պարո՞ք յղացումը, կը գրէ ան, «արտակարգ իրավիճակին շուրջ բանավէճէ մը մեկնելով կը ծաւալի, եւ իշխանին կը վերագրէ գայն մերժելու ամենակարեւոր դերակատարութիւնը» (*den auszuschließen* [Benjamin, 1928, GS 2, էջ 245]): «Որոշել»ու եւ «մերժել»ու միջեւ այս փոխարինումը աննշմարելի կերպով կ'այլափոխէ շմիթեան սահմանումը, նոյն արարքով գոր կը յաւակնի գայն ոգեկոչել. որոշելով արտակարգ իրավիճակին շուրջ, գերիշխանը պէտք է գայն ինչ որ ձեւով ներառնէ իրաւակարգին մէջ. ընդհակառակը՝ պէտք է գայն բացառէ, ատկէ դուրս ձգէ:

Այս էական փոփոխութեան իմաստը կը յստականայ յաջորդող էջերուն մէջ, «գերիշխանական անորոշութեան» իսկական տեսութեան մը մշակումով. ճիշդ այս կէտին սակայն, աւելի սեղմ կը դառնայ հանգուցաւորումը ընդմէջ ընթերցումին եւ՝ հակառակ ուղղութեամբ ընթերցումին: Եթէ Շմիթին համար որոշումը կապն է որ կը միացնէ գերիշխանութիւնը եւ արտակարգ իրավիճակը, Բենիամին հեզութեամբ կ'անջատէ գերիշխան տիրակալութիւնը իր իսկ գործադրումէն եւ ցոյց կու տայ, որ պարո՞ք գերիշխանը ըստ էութեան որոշելու անկարելութեան մէջ կը գտնուի: «Գերիշխան տիրակալութեան [*Herrschermacht*] եւ գայն գործադրելու կարողութեան [*Herrschervermögen*] միջեւ գտնուող հակադրութիւնը պարո՞ք տոամային ընձեռած է յատուկ նկարագիր, որ սակայն երեւութապէս միայն առնչուած է սեռին, եւ որուն յստակեցումը կարելի է միմիայն գերիշխանութեան տեսութիւնը նկատի առնելով: Բռնապետին որոշելու կարողութեան [*Entschlußfähigkeit*] կը վերաբերի: Իշխանը, որուն մենաշնորհն է արտակարգ իրավիճակին մասին որոշումը, առաջին իսկ պատեհ առիթին՝ կը փաստէ որ որոշումը իրեն համար գրեթէ անկարելի է» (անդ, էջ 250):

Գերիշխան տիրակալութեան եւ անոր գործադրումին միջեւ խզումը ճշգրտօրէն կը համապատասխանէ իրաւունքով սահմանուած կանոններուն եւ նոյն այդ կանոններու կիրարկումին միջեւ գոյացող խզումին, որ *Die Diktatur* գիրքին մէջ լիազօրական բռնապետութեան (*dittatura commissaria*) հիմքը կը կազմէր: Շմիթի հակադիր կեցուածքին (*Politische Theologie* [Քաղաքական աստուածաբանութիւն] գիրքին մէջ), որ սահմանադրական իշխանութեան ու սահմանադրուած իշխանութեան միջեւ տրամախոհութեան բենիամինեան քննադատութեան ի պատասխան, որոշումի յղացքը ներմուծած էր, Բենիամին իր կարգին կը հակազդէ, հարցականի տակ դնելով շմիթեան զանազանումը, ընդմէջ՝ կանոնին եւ կանոնի կիրարկումին: Գերիշխանը, որ

ամէն անգամ պէտք է որոշէ արտակարգ վիճակին մասին, ճիշդ այն վայրն է ուր իրաւունքի մարմինը տրոհող բեկումը անդարմանելի կը դառնայ — *Macht*-ի եւ *Vermögen*-ի միջեւ, իշխանութեան եւ անոր կիրարկումին միջեւ բաց մը կը ձեւանայ, գոր որեւէ որոշում անկարող կ'ըլլայ փակելու:

Այդ իսկ պատճառով, յաւելեալ տեղափոխութեամբ մը, արտակարգ վիճակի յարացոյցը կը դադրի այլեւս հրաշք լուծումը ըլլալէ, որ էր *Քաղաքական աստուածաբանութեան* մէջ, եւ փոխարէնը կու գայ աղէտը: «Ռեստորացիայի պատմական իտէալին որպէս հակադրոյթ, անոր [պարոքի] դէմ կը յայտնուի աղէտի գաղափարը: Եւ այս հակադրոյթին վրայ կը ստեղծուի արտակարգ վիճակի տեսութիւնը» (անդ, էջ՝ 246):

*Gesammelte Schriften*-ի բնագիրին մէջ հրատարակիչներուն կողմէ ներմուծուած անյաշող սրբագրութիւն մը արգելք հանդիսացած է, որ կշռադատուին այս տեղափոխութեան բոլոր հետեւանքները: Հոն ուր բենիամինեան բնագիրը կ'ըսէր՝ *Es gibt eine barocke Eschatologie*, «կայ պարոք վախճանաբանութիւն մը», խմբագիրները, լեզուագիտական տարրական գուշութեան նկատմամբ եզակի անտարբերութիւն մը ցուցաբերելով, սրբագրած են հետեւեալ ձեւով՝ *Es gibt keine...* «չկայ պարոք վախճանաբանութիւն մը» (անդ): Թէեւ յաջորդող հատուածը տրամաբանօրէն եւ շարադասական առումով կը համընկնի բնագրի տարբերակին հետ — «եւ այս իսկ պատճառով [կայ] գործընթաց մը, որ կը մէկտեղէ ու կը փառաւորէ երկրային բոլոր արարածները, զանոնք վերջաւորութեան [dem Ende] յանձնելէ առաջ»: Պարոքը *eschaton* մը կը ճանչնայ, ժամանակի աւարտ մը. բայց, ինչպէս Բենիամին անմիջապէս կը ճշդէ, այդ *eschaton*-ը դատարկ է, չի ճանչնար ո՛չ փրկագործութիւն, ո՛չ ալ անդեմական, եւ կը մնայ աշխարհիկի սահմաններուն մէջ — «անդեմականը պարպուած է ամեն ինչէ, որուն մէջ տակաւին աշխարհիկ նուագագոյն շունչ մը կը փչէ. պարոքը անկէ կը պոկէ շատ բաներ, որոնք մինչեւ այդ օրը որեւէ կերպաւորումէ գերծ էին, եւ իր գագաթնակէտին՝ զանոնք լոյս աշխարհ կը բերէ ամբողջովին կերպաւորուած, երկինքը վերջնապէս դատարկելու միտումով, որպէսզի իր դատարկութիւն, ի վիճակի ըլլայ աշխարհը անէացնելու, մէկ օրուան մէջ իսկ, աղիտալի ուժգնութեամբ» (անդ):

Այսպիսի «սպիտակ վախճանաբանութիւն» մըն է — որ երկիր մոլորակը չ'առաջնորդեր դէպի փրկագործուած անդեմական մը, այլ գայն կը յանձնէ բացարձակապէս դատարկ երկինքի մը — որ պարոքի արտակարգ վիճակը կը պատկերէ իր աղէտ: Եւ նոյնպէս այս սպիտակ վախճանաբանութիւնն է, որ կը կոտրէ գերիշխանութեան եւ անդրազանցութեան միջեւ, միապետին եւ Աստուծոյ միջեւ համապատասխանութիւնը, որ կը սահմանէր շմիթեան աստուածաբանական-Քաղաքականը: Այս մէկուն մէջ՝

«գերիշխանը [...] Աստուծոյ հետ կը նոյնանայ եւ Պետութեան մէջ նիշդ նոյն դիրքը կը գրաւէ, որ աշխարհի մէջ Դեֆարթի համակարգին համաձայն՝ վերապահուած է Աստծոյ» (Schmitt, 1922, p. 260), մինչդեռ Բենիամինի մօտ գերիշխանը «սահմանուած կը մնայ արարչութեան ծիրին մէջ. արարածներու տէրն է, սակայն իր կարգին արարած մըն է» (Benjamin, 1928, p. 264):

Գերշխանական դերակատարութեան այս կտրուկ վերասահմանումը արտակարգ վիճակին դիրքը կը փոխէ: Ան չի յայտնուիր այլեւս որպէս ներսի մը ու դուրսի մը միջեւ, ինչպէս նաեւ ապօրինութեան եւ իրաւական շրջածիրին միջեւ յօդաւորումը երաշխաւորող սեմը, շնորհիւ օրէնքի մը որ ի գօրու է իր առկախեալ վիճակին մէջ. հիմա՝ բացարձակ անորոշութեան գօտի մըն է ապօրինութեան եւ իրաւունքի միջեւ, ուր արարածային ոլորտը եւ իրաւակարգը ներմղուած են նոյն աղէտին մէջ:

4.5 Բենիամին-Շմիթ թղթածրարի որոշիչ փաստաթուղթը վստահաբար պատմութեան յղացքին վերաբերեալ ութերորդ դրոյթն է, Բենիամինի կողմէ գրի առնուած, մահէն քանի մը ամիս առաջ: «Ճնշուածներու աւանդութիւնը մեզի կը թելադրէ որ այդ “արտակարգ վիճակը” որուն մէջ կ’ապրինք՝ կանոնն է: Պէտք է հասնինք պատմութեան այնպիսի պատկերացումի մը, որ համապատասխանէ այդ իրողութեան: Այն ատեն մեր աչքին առջեւ պիտի ունենանք իրական [wirklich] արտակարգ վիճակը արտադրելու պարտականութիւնը» (Benjamin, 1942, p. 697):

Արտակարգ վիճակը կանոնի վերածուած է ըսելը՝ *Trauerspielbuch*-ին մէջ իբր անորոշելիութիւն յայտնուածին պարզ արմատականացումը չէ: Պէտք չէ մոռնալ հոս, որ թէ՛ Բենիամին, թէ՛ Շմիթ գործ ունէին պետութեան մը — նացիական Ռայխին — հետ, ուր արտակարգ վիճակը, 1933-ին հռչակուած, բնաւ չէր յետսակոչուած: Իրաւագէտի տեսանկիւնէն դիտուած՝ Գերմանիան գործնականօրէն գերիշխանական բռնատիրութեան կացութեան մը մէջ կը գտնուէր, որ պիտի առաջնորդէր Վայմարի Սահմանադրութեան վերջնական ջնջումին, եւ նոր սահմանադրութեան մը հաստատումին, որու հիմնական յատկանիշները Շմիթ ջանացած է սահմանել շարք մը յօդուածներու երկայնքին, 1933-36 տարիներուն: Բայց ինչ որ Շմիթ բացարձակօրէն չէր կրնար ընդունիլ, այն էր որ արտակարգ վիճակը ամբողջութեամբ նոյնացած ըլլար սովորական դարձած կանոնին: Արդէն իսկ 1921ի *Die Diktatur* գիրքին մէջ, հաւաստած էր որ անկարելի է սահմանել բռնատիրութեան իրաւացի յղացք մը, եթէ իրաւական ամէն կարգ երեւի «միայն որպէս ծածկընթաց, մէջ ընդ մէջ ընդհատուող բռնատիրութիւն» (Schmitt, 1921, p. XIV): Ճիշդ է, որ *Քաղաքական աստուածաբանութիւնը* առանց վերապահութեան կ’ընդունէր բացառութեան առաջնութիւնը, քանզի կարելի կը դարձնէր կանոնական ոլորտին կազմութիւնը. բայց եթէ կանոնը, այս իմաստով,

«միայն բացառութեամբ կ'ապրի» (Schmitt, 1922, p. 22), ի՞նչ տեղի կ'ունենայ երբ բացառութիւնն ու կանոնը անորոշելի դառնան:

Իրաւակարգին բանելու ձեւը, վերջին հաշուով, շմիթեան տեսանկիւն էն դիտուած, տրամադրիչի մը — արտակարգ վիճակին — վրայ կը յենի, որուն նպատակն է օրէնքը կիրարկելի դարձնել, ժամանակաւորապէս առկախելով անոր ներգործութիւնը: Այն պահուն երբ բացառութիւնը կանոն կը դառնայ, վարչամեթոտան ալիւս բանելու ի վիճակի չ'ըլլար: Այս առումով, օրէնքի եւ բացառութեան անորոշելիութիւնը, Բենիամինի ութերորդ դրոյթին մէջ բանաձեւուած, շմիթեան տեսութիւնը անել կացութեան կը մատնէ: Գերիշխան որոշումը ալիւս ի վիճակի չ'ըլլար կատարելու *Քաղաքական աստուածաբանութեան* սահմանած պարտականութիւնըն. այժմ իրեն կեանք տուողին հետ նոյնացած կանոնը ինքզինք կը յօշոտէ: Բայց բացառութեան եւ սովորական կանոնին միջեւ այս խառնաշփոթութիւնը ճիշդ ա'յն է, ինչ որ Երրորդ Ռայխը շոշափելիօրէն իրականացուցած էր, եւ ասոր փաստն է՝ Հիթլերին կողմէ յամաօրէն հետապնդուած «երկակի իրավիճակ»ի կազմակերպութիւնը, առանց նոր սահմանադրութիւն մը հրապարակելու (այս առումով, Շմիթի փորձը, նացիական Ռայխէն ներս Führer-ին եւ ժողովուրդին միջեւ նիւթական նոր յարաբերութիւն մը սահմանելու, անխուսափելիօրէն ձախողութեան մատնուած էր):

Այս դիտանկիւնէն պէտք է կարդացուի բենիամինեան զանազանումը, ութերորդ դրոյթին մէջ, իսկական արտակարգ վիճակին եւ պարզ արտակարգ իրավիճակին միջեւ: Ինչպէս տեսանք, զանազանումը արդէն իսկ կար բռնատիրութեան նուիրուած Շմիթի մենագրութեան մէջ: Շմիթ եզրը փոխ կ'առնէր Թէոդոր Ռայնախի *De l'état de siège* գիրքէն. սակայն մինչ Ռայնախ, 24 դեկտեմբեր 1811ի նափոլէոնական հրովարտակին առնչութեամբ, *état de siège effectif*-ը (գինուորական պաշարման վիճակը) կը հակադրէր *état de siège fictif*-ին (Քաղաքական պաշարման վիճակին), Շմիթ, իրաւակարգի իր յամառ քննադատութեան հաւատարիմ մնալով, «յերիւրածոյ» կը կոչէ օրէնքով հաստատուելիք արտակարգ վիճակ մը, որ որոշ չափով ապահովէր անհատի իրաւունքներն ու ազատութիւնները: Հետեւաբար ուժեղ կերպով կը պախարակէ Վայմարի իրաւագէտներուն անկարողութիւնը իրարմէ զանազանելու 48րդ յօդուածին հիման վրայ Ռայխի նախագահին կատարածները եւ օրէնքով կանոնադրուած գործընթաց մը:

Բենիամին դարձեալ կը բանաձեւէ իր հակադրութիւնը, ընդդէմ Շմիթի: Զեղեալ համարուելէ ետք կեղծ արտակարգ վիճակի մը որեւէ կարելիութիւն, ուր բացառութիւն եւ բնականոն պարագայ ըստ ժամանակին եւ վայրին զանազանուած ըլլային, ի գօրու է այժմ արտակարգ վիճակը «որուն մէջ կ'ապրինք», եւ որ բացարձակապէս անզատորոշելի է կանոնէն: Բրտութեան եւ իրաւունքի միջեւ գոյացող կապի որեւէ

յերիւրուած ենթադրութիւն անտեղի է հոս. մեր առջեւ կայ միայն ապօրինութեան տարածք մը, ուր բրտութիւնը կը բանի, առանց որեւէ իրաւական հանգամանքի: Պետական տիրակալութեան ջանքը ապօրինութիւնը իրեն կցելու, արտակարգ վիճակին միջոցաւ, Բենիամինի կողմէ կը դիմակազերծուի ու կը ներկայացուի ինչ-պէս որ է – այսինքն որպէս կատարեալ *fictio iuris* մը, որ կը յաւակնի պահել իրաւունքը իր առկախեալ վիճակովն իսկ, իբր՝ օրէնքի-ոյժ: Անոր տեղը կու գան այժմ քաղաքացիական պատերազմ եւ յեղափոխական բրտութիւն, այսինքն մարդկային արարքներ որոնք իրաւունքին հետ որեւէ առնչութենէ հրաժարած են:

4.6. Բենիամինի եւ Շմիթի միջեւ արտակարգ վիճակին շուրջ բանավեճին գրաւարկը կրնայ այժմ աւելի յստակօրէն սահմանուիլ: Վէճը տեղի կ'ունենայ ապօրինութեան շրջանակէ մը ներս, որ մէկ կողմէ՝ ի գին ամեն բանի պէտք է օրէնքին առնչուած մնայ, միւս կողմէ պէտք է նոյնքան անողոք կերպով լուծուի ու ձերբազատուի այդ առնչութենէն: Ապօրինութեան տարածքէն ներս խնդրոյ առարկայ է ուրեմն բրտութեան եւ իրաւունքին միջեւ յարաբերութիւնը – վերջին հաշուով՝ բրտութեան օրինավիճակը իբր մարդկային արարքի յատկանիշ: Ամէն անգամ բրտութիւնը իրաւական շրջածիրի մէջ գետեղելու շմիթեան ձգտումին՝ Բենիամին շարունակ կը պատասխանէ ապահովելով անոր – իբր գուտ բրտութիւն – իրաւունքէն դուրս գոյութիւն մը:

Որոշ պատճառներով, որոնք կը կարօտին յստակացումի, ապօրինութեան շուրջ այս պայթարը կարծես արեւմտեան քաղաքականութեան համար նոյնքան վնասական է որքան այդ *gigantomachia per tes ousias*-ը, գոյացութեան շուրջ հսկաներու պայթարը, որ կը սահմանէ արեւմտեան բնագանցութիւնը: Բնագանցութեան վերջին գրաւարկը հանդիսացող գուտ գոյացութեան, գուտ գոյութեան կը համապատասխանէ հոս գուտ բրտութիւնը, իբր ծայրայեղ քաղաքական առարկայ, քաղաքականութեան «իր»ն իսկ: Զուտ գոյացութիւնը *logos*-ի ցանցերուն մէջ առեւանգելու ձգտող գոյաստուածա-բանական ռազմավարութեան՝ կը համապատասխանէ բացառութեան ռազմավարութիւնը, որ պէտք է ապահովէ օրինագուրկ բրտութեան եւ իրաւունքին միջեւ յարաբերութիւնը:

Այս ամբողջը այնպիսի ձեւով տեղի կ'ունենայ, որ կարծես ե՛ւ իրաւունքը, ե՛ւ *logos*-ը պէտք ունենային օրինագուրկ (կամ ապա-տրամաբանական) առկախեալ տարածքի մը, որպէսզի կարենային հիմնել կեանքի աշխարհին հետ իրենց կապակցութիւնը: Իրաւունքը կարծես՝ կրնայ գոյութիւն ունենալ ապօրինութեան ձեռքակալումով, ու նոյնպէս լեզուն կրնայ գոյութիւն ունենալ միայն ոչ-լեզուականի ձեռքբերումով: Երկու պարագաներուն ալ, բախումը կարծես կը կայանայ պարապութեան մը շուրջ – մէկ կողմը՝ ապօրինութիւն, իրաւական *vacuum*, միւս կողմը՝ գուտ գոյացութիւն,

որեւէ որոշադրութեան եւ որեւէ իրական ստորագելիի բացակայութիւն: Իրաւունքին համար, այս դատարկ տարածքը արտակարգ վիճակն է որպէս բաղկացուցիչ չափում: Օրէնքի եւ իրականութեան միջեւ յարաբերութիւնը իր մէջ կը պարունակէ օրէնքին առկախումը, այնպէս ինչպէս գոյաբանութեան մէջ՝ լեզուի ու աշխարհի միջեւ յարաբերութիւնը կը պահանջէ *langue*-ի մը միջոցաւ մատնանշումին առկախումը: Բայց նոյնքան էական է իրաւակարգին համար որ այս տարածքը — ուր գետեղուած է մարդակային արարք մը, առանց որեւէ առնչութեան օրէնքին հետ — գուգադիպի իրաւունքի ծայրայեղ ու ուրուականային կերպարի մը, ուր ան պիտի խզուի ընդմէջ՝ գուտ ի գօրու ըլլալ մը, առանց կիրարկումի (օրէնքի ձեւը) եւ գուտ կիրարկումի մը, առանց ի գօրու ըլլալու — ~~օրէնքի~~ ուժը:

Եթէ մինչեւ հոս ըսուածը ճիշդ է, արտակարգ վիճակի կառոյցը ա՛լ աւելի բարդ է քան ինչ որ ցարդ նշմարած էինք, եւ անոր մէջ ու անոր համար պայժարող երկու կողմերուն ամէն մէկուն դիրքաւորումը ա՛լ աւելի սեղմօրէն ընդելուզուած է միւսին: Ինչպէս խաղի մը ընթացքին, երկու մրցակիցներէն մէկուն յաղթանակը, խաղին համաձայն, վերականգնելի սկզբնական իրավիճակի մը նման չէ, այլ խաղին գրաւարկն իսկ է, որ չի կանխեր գայն, այլ անոր հետեւանքն է. նոյնպէս՝ գուտ բրտութիւնը — որ Բենիամինի կողմէ տրուած անունն է մարդկային արարքի մը, որ ո՛չ օրինադրական է, ո՛չ ալ օրինապահական — մարդկային արարումին յատուկ սկզբնական կերպար մը չէ, որ որոշ կէտի մը՝ ձեռք ձգուէր ու իրաւակարգին մէջ արձանագրուէր (ճիշդ ինչպէս գոյութիւն չունի խօսող մարդկային էակին համար նախալեզուական իրականութիւն մը, որ որոշ պահու մը լեզուին մէջ փոխադրուէր): Արտակարգ իրավիճակին շուրջ մղուած կռիւին գրաւարկն է ան միայն, անոր հետեւանքը, եւ միայն այդ ձեւով է որ կ'ենթադրուի որպէս իրաւունքը կանխող տարր:

4.7. Ուրեմն ա՛լ աւելի կարեւոր է ճշգրտօրէն ընկալել *reine Gewalt* — գուտ բրտութիւն — արտայայտութեան նշանակութիւնը, որպէս բենիամինեան խոհագրութեան յատուկ էական մասնագիտական եզր: Ի՞նչ կը նշանակէ հոս «գուտ»: 1919-ի Յունուար ամսուն, այսինքն խոհագրութեան խմբագրութեանէն գրեթէ տարի մը առաջ, Էրնստ Շէօնին յղած իր մէկ նամակին մէջ, որ վերստին ձեռք կ'առնէ Stifter-ին նուիրուած յօդուածի մը մէջ զարգացուած նիւթեր, Բենիամին ուշադրութեամբ կը բացայայտէ «գտութիւն» (*Reinheit*) եզրով ըսել ուզածը — «Սխալ է ենթադրել գտութիւն մը որ տեղ մը, ինքն իր մէջ գոյութիւն ունենայ, եւ գոր պէտք ըլլայ պահպանել [...]: Էակի մը գտութիւնը *երբեք* պայմանէ գուրկ ու բացարձակ չէ, մի՛շտ պայմանէ մը կախեալ է: Սոյն պայմանը կրնայ տարբեր ըլլալ ըստ էակին, որուն գտութիւնը խնդրոյ առարկայ է. սակայն *երբեք* էակին մէջ չի բնակիր: Այլ խօսքով, իւրաքանչիւր (հունաւոր) էակի գտութիւնը երբեք ինքն իրմէ կախեալ չէ [...]:

Բնութեան համար, իր գտութեան պայմանը, որ իրմէ դուրս է, մարդկային լեզուն է» (Benjamin, 1966, էջ 205 եւ յաջորդք):

Զտութեան ո՛չ գոյացական, այլ առնչական այս յղացքը Բենիամինի համար այնքան էական է, որ տակաւին Kraus-ին յատկացուած 1931ի ուսումնասիրութեան մէջ ան կը գրէ որ «արարածի ծագումը գտութեան [*Reinheit*] մէջ չէ՛ որ պէտք է փնտոնել, այլ՝ մաքրագործումին մէջ [*Reinigung*]» (Benjamin, 1931, p. 365): Կը նշանակէ, որ 1921ի ուսումնասիրութեան մէջ խնդրոյ առարկայ գտութիւնը իր կարգին գոյացական յատկանիշ մը չէ, բան մը որ ինքն իրմով բիրտ արարքին պատկանէր — որ, այլ խօսքով, գուտ բրտութեան եւ առասպելա-իրաւական բրտութեան միջեւ տարբերութիւնը կը գտնուի ո՛չ թէ նոյն ինքն բրտութեան մէջ, այլ իրմէ դուրս գտնուող բանի մը հետ յարաբերութեան մէջ: Թէ ի՞նչ բան է այս արտաքին պայմանը՝ հաստատակամօրէն արտայայտուած է աշխատասիրութեան մուտքին. «Բրտութեան քննադատութեան մը պարտականութիւնը կրնայ սահմանուիլ որպէս իր յարաբերութեան ներկայացումը իրաւունքին ու արդարութեան հետ»: Ուստի, բրտութեան յատուկ «գտութեան» չափանիշը նոյնպէս գետնդուած պիտի ըլլայ իրաւունքին հետ իր յարաբերութեան մէջ (ի հարկէ՝ ուսումնասիրութեան մէջ արդարութեան նիւթը շօշափուած է միա՛յն իրաւունքի նպատակակէտերը հետապնդող դիտանկիւնէ):

Ըստ Բենիամինի դրոյթին, մինչ առասպելա-իրաւական բրտութիւնը նպատակի մը ծառայող միջոց է միշտ, գուտ բրտութիւնը երբեք պարզ (իրաւ կամ անիրաւ) նպատակ մը հետապնդող (արդար կամ անարդար) միջոց մը չէ: Բրտութեան քննադատութիւնը բրտութիւնը չ'արժեւորեր հետապնդուած նպատակներուն համաձայն, այլ անոր չափանիշը կը փնտոնէ «միջոցներու ծիրին մէջ իսկ գանազանումով, առանց նկատի առնելու անոնց հետապնդած նպատակները» (Benjamin, 1921, էջ 179):

Հոս կը յայտնուի բրտութեան նիւթը իբր «գուտ միջոց» — որ գրութեան մէջ պահ մը միայն կը փայլատակի, բաւարար սակայն՝ լուսաւորելու ամբողջ գրութիւնը — այսինքն որպէս կերպար յարակարծական «աննպատակ հաղորդակցութեան» մը. այսինքն միջոց մը, որ այդպիսին մնալով հանդերձ՝ հետապնդուող նպատակներէն անկախ նկատի կ'առնուի: Հետեւաբար հարցը արդար նպատակներ գտնելը չէ, այլ՝ «տարբեր ձեւի բրտութիւն մը բնորոշել, որ վստահաբար պիտի չկարենայ այդ նպատակներուն համար օրինաւոր կամ ապօրէն միջոց նկատուիլ, բայց երբեք անոնց նկատամամբ միջոցի դեր պիտի չկատարէ, այլ տարբեր ձեւով մը պիտի մօտենայ [*nicht als Mittel zu Ihnen, vielmehr irgendwie anders sich verhalten würde*]» (անդ, էջ՝ 196):

Ի՞նչը կրնայ ըլլալ նպատակի մը հետ յարաբերութեան այս տարբեր ձեւը: Հարկ է քիչ առաջ Բենիամինի համար «գուտ» եզրի նշանակութեան առնչութեամբ մեր նկատողութիւնները կիրարկել նաեւ «գուտ» միջոցի յղացքին: Միջոցը իր գտութիւնը չի պարտիր որեւէ ներքին բնորոշ յատկութեան, որ գայն տարբերակէր իրաւական միջոցներէն. կը պարտի գայն ասոնց հետ իր յարաբերութեան: Ինչպէս լեզուին յատկացուած ուսումնասիրութեան մէջ՝ գուտ է այն լեզուն որ հաղորդակցութեան նպատակին ծառայող գործիք չէ, այլ անմիջապէս ինքզինք կը հաղորդէ, այսինքն պարզ ու ջինջ հաղորդակցականութիւն է, նոյնպէս գուտ է այն բրտութիւնը որ նպատակի մը հետ յարաբերութեամբ միջոցի դիրք չի գրաւեր, այլ յարաբերակցութեան մէջ է իր իսկ միջոցի հանգամանքին հետ: Եւ ինչպէս որ գուտ լեզուն այլ լեզու մը չէ, տարբեր վայր մը չունի համեմատած՝ հաղորդակցող բնական լեզուներուն, այլ ասոնց մէջ կը յայտնուի զանոնք իբր այդ ցուցաբերելով, նոյն ձեւով ալ՝ գուտ բրտութիւնը կը գործէ որպէս բրտութեան եւ իրաւունքի միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութեան ցուցադրողն ու վկայողը: Այս է որ Բենիամին կը թելադրէ անմիջապէս յետոյ, ոգեկոչելով բրտութեան նիւթը, որ բարկութեան պարագային՝ երբեք միջոց չէ, այլ միայն յայտնաբերում (*Manifestation*): Մինչ բրտութիւնը որպէս օրինադրական միջոց երբեք իրաւունքին հետ իր յարաբերութիւնը չի վկայակոչեր, եւ այսպիսով իրաւունքը կը տեղադրէ որպէս տիրակալութիւն (*Macht*), որ «մտերմօրէն եւ անհրաժեշտօրէն անոր կապուած» կը մնայ (անդ, էջ՝ 198), ընդհակառակը՝ գուտ բրտութիւնը իրաւունքի ու բրտութեան միջեւ կապը կը ցուցադրէ ու կը կտրէ, եւ այսպիսով կրնայ ի վերջոյ յայտնուիլ ոչ իբրեւ կտրուած կամ գործադրող (*die schaltende*), այլ պարզապէս իբրեւ գործող ու ցուցաբերող բրտութիւն (*die waltende*): Եւ եթէ այս ձեւով գուտ բրտութեան եւ իրաւական բրտութեան միջեւ, կամ արտակարգ վիճակի եւ յեղափոխական բրտութեան միջեւ փոխյարաբերութիւնը այդքան սեղմ է, որ պատմութեան թատերաբեմին վրայ երկու մրցակիցները կարծես նոյն քարը կը շարժեն, մերթ՝ ~~օրէնքի~~ ոյժ եւ մերթ՝ գուտ միջոց, այսուհանդերձ՝ վնասակարգ այն է, որ իրենց զանազանումի չափանիշը բոլոր պարագաներուն՝ յենուած է բրտութեան եւ իրաւունքին միջեւ գոյացող հանգոյցի լուծումին վրայ:

4.8 Այս տեսանկիւնէն պէտք է կարդալ Ե՛ւ Շոլեմին յղուած 11 Օգոստոս 1934ի նամակին մէջ պրունակուած հաւաստումը, որուն համաձայն՝ «գրութիւն մը առանց իր բանալիին՝ գրութիւն չէ, այլ՝ կեանք» (Benjamin, 1966, էջ 618), Ե՛ւ Քաֆայի նուիրուած ուսումնասիրութեան մէջ անցողակի նկատողութիւնը, որուն համաձայն՝ «այլեւս չկիրարկուած եւ միայն ուսումնասիրուած իրաւունքը արդարութեան դուռն է» (Benjamin, 1934, էջ 437): Գրութիւնը (*Torah*) առանց իր բանալիին՝ օրէնքի յատկանիշն է արտակարգ իրավիճակին մէջ, որուն մասին ընդհակառակը՝ Շոլեմ, առանց

կասկածելու որ ինք Շմիթին հետ այս դրոյթը կրնար բաժնել, կը շարունակէ պնդել որ տակաւին օրէնք է, օրէնք մը որ ի գօրու է, սակայն չի կիրարկուիր, կամ կը կիրարկուի առանց ի գօրու ըլլալու: Այս օրէնքը — կամ աւելի ճիշդ՝ այս օրէնքի ուժը — ըստ Բենիամինի՝ այլեւս օրէնք չէ, այլ կեանք, կեանք որ Քաֆայի վէպին մէջ «կ'ապրուի գիւղին մէջ, լեռան ստորոտին, ուր ամրոցը կը բարձրանայ» (անդ): Քաֆային ամենէն իւրայատուկ արարքը կը կայանայ ո՛չ թէ իր իմաստը կորսնցուցած օրէնք մը պահելուն մէջ, ինչպէս կը կարծէր Շուլեմ, այլ ցոյց տալուն մէջ որ օրէնքը կը դադրի օրէնք ըլլալէ ամբողջութեամբ ձուլուելով կեանքին հետ:

Քաֆային նուիրուած ուսումնասիրութեան մէջ, գուտ բրտութեան կողմէ գործադրուած առասպելա-իրաւական բրտութեան դիմակագերծումին կը համապատասխանէ, տեսակ մը նշխարի պէս, իրաւունքի մը խորհրդաւոր պատկերը, որ այլեւս չէ կիրարկուած, այլ միայն ուսումնասիրուած է: Ուստի կայ տակաւին իրաւունքի կարելի պատկեր մը, բրտութեան եւ տիրակալութեան ուժին հետ իր կապէն հրաժարելէ ետք. բայց խօսքը այլեւս առանց ուժի եւ առանց կիրարկումի իրաւունքի մը մասին է, նման անոր՝ որուն ուսումնասիրութեան մէջ կը խորասուզուի «նոր փաստաբան»ը, թերթատելով «մեր հին օրէնագիրքերը». կամ անոր նման՝ որ գուցէ իր մտքին մէջ ունէր Պուժոն, երբ կը խօսէր «նոր իրաւունքի» մը մասին, որեւէ կարգապահութենէ եւ գերիշխանութեան հետ որեւէ կապէ ձերբագատուած:

Ի՞նչ կրնայ ըլլալ իրաւունքի մը իմաստը, որ այդ ձեւով կը վերապրի գահընկէց ըլլալէ ետք: Այն դժուարութիւնը, որուն հետ Բենիամին կը չափուի այստեղ, կը համապատասխանէ հարցի մը, գոր կարելի է բանաձեւել — եւ գործնականօրէն բանաձեւուած է առաջին անգամ մը, սկզբնական շրջանի քրիստոնէութեան մէջ եւ երկրորդ հանգրուանի մը՝ մարքսեան աւանդութեան մէջ — հետեւեալ եզրերով՝ ի՞նչ կը պատահի օրէնքին, իր մեսիական վախճանէն ետք: (Պաւլոսը եւ իր ժամանակակից հրեաները իրարու հակադրող վէճն է այս մէկը): Եւ ի՞նչ կը պատահի իրաւունքին առանց դասակարգի հասարակութեան մը մէջ (այս մէկը՝ Վիշինսկիի եւ Փասուֆանիսի միջեւ բանավէճին բովանդակութիւնն է): Այս հարցերուն է, որ Բենիամին կ'ուզէ պատասխանել «նոր փաստաբան»ի իր մեկնաբանութեամբ: Բնականաբար, անցողական շրջանի մը հետ կապ չունի այս մէկը, շրջանի մը՝ որ երբեք չի հասնիր այն նպատակին որուն ուղղուած էր, եւ ոչ իսկ անվերջ ապակառուցումի մը գործընթացին հետ, որ ուրուականային վիճակի մը մէջ պահելով իրաւունքը՝ այլեւս այդ թննուկէն չի յաջողիր ձերբագատուիլ: Վճռական կէտը հոս այն է, որ իրաւունքը — ոչ եւս կիրարկուած, այլ միայն ուսումնասիրուած — արդարութիւնը չէ, այլ միայն դուռը որ անոր կ'առաջնորդէ: Դէպի արդարութիւն նրբանցք մը բացողը իրաւունքին ջնջումը չէ, այլ իրաւունքի անգործօն վիճակին ու անգործունէութեան մատնելը —

այսինքն՝ իրաւունքը տարբեր ձեւով գործածելու եղանակ մը: Ա՛յդ է որ օրէնքին ուժը — որ իրաւունքը աշխոյժ կը պահէ ձեւական իր առկախումէն անդին — կ'ուզէ խոչընդոտել: Քաֆային տիպարները — եւ այս է պատճառը որ անոնք մեզ կը հետաքրքրեն — արտակարգ վիճակին մէջ իրաւունքի այս ուրուականային պատկերին հետ գործ ունին. ամէն մէկը իր անհատական ռազմավարութեամբ կը ջանայ գայն «ուսումնասիրել» եւ անգործութեան մատնել, անոր հետ «խաղալ»:

Օր մը, մարդկութիւնը օրէնքին հետ պիտի խաղայ, ինչպէս մանուկները անգործածելի դարձած առարկաներու հետ կը խաղան, ո՛չ թէ զանոնք կանոնական իրենց գործածութեան վերադարձնելու համար, այլ զանոնք անկէ վերջնականապէս ազատագրելու նպատակով: Ինչ որ իրաւունքէն ետք կը մնայ՝ աւելի պատշաճ եւ իւրաքանչեւ գործածական արժէք մը չէ, իրաւունքը նախորդող, այլ՝ նոր վարում մը կամ նոր գործածութիւն մը [un nuovo uso]<sup>2</sup>, որ ծնունդ կ'առնէ միայն անկէ ետք: Իրաւունքի միջամտութենէն վարակուած վարում-գործածութիւնն ալ պետք է ձեռքագատուի ի՛ր իսկ արժէքէն: Այս ազատագրումը ուսման կամ խաղին պարտականութիւնն է: Այս ուսումնական խաղը նրբանցքն է, որ թոյլ կու տայ մուտք գործել այն արդարութենէն ներս, որ Բենիամինի յետ մահու տպուած մէկ պատահիկը կը սահմանէ որպէս աշխարհի այն իրավիճակը, որուն մէջ ան կը յայտնուի իբր արժէք մը, գորբացարձակօրէն անկարելի է իւրացնել եւ իրաւակարգին ենթարկել (Benjamin, 1992, p. 41):

---

<sup>2</sup> [Խմբագրական ծանօթագրութիւն]

Ազամբէնին ուզած իմաստով այս նոր տեսակի USO-ն հասկնալու եւ մանաւանդ՝ թարգմանելու դժուարութեան մասին՝ ընթերցողը կը յղենք իր *Il tempo che resta* գիրքին հայերէն թարգմանութեան վերջաբանին (Ջորջօ Ազամբէն, *Ժամանակը որ կը մնայ*, թարգմանութիւն եւ վերջաբան՝ Մարկ Նշանեան, ԿԱՄ փիլիսոփայական գրադարան, Հայ գրքի կենտրոն, Երեւան, 2024): Վերջաբանին վերնագիրն է՝ «Թարգմանական թնուկ մը, խրճիճ, խրճիճ բռնեղուն շուրջ»: Այդ վերջաբանին մէջ է, ի հարկէ, որ կը բացատրենք USO-ի այս յատուկ իմաստին համար՝ «վարում» բառը (ի հարկէ՝ հինէն եկած բայց որպէս նորարանութիւն միջամտող բառը) գործածելու մեր փորձը եւ այդ փորձին դրդապատճառները:

## Մատենագիտական աղբյուրներ

### Walter Benjamin

- 1921 «Zur Kritik der Gewalt» [Բրտուրեան քննադատութեան ի նպաստ], in *Gesammelte Schriften* [GS], Suhrkamp, Frankfurt a. main, 1972-1989, vol. 2.1.
- 1928 *Ursprung des deutschen Trauerspiels* [Գերմանական ողբերգութեան ծագումը], GS, vol. 1.1 (եւ 1.3).
- 1931 «Karl Kraus», GS, vol. 2.1.
- 1934 «Franz Kafka», GS, vol. 2.2.
- 1942 «Über den Begriff der Geschichte» [Պատմութեան յղացքին շուրջ], GS, vol. 1.2.
- 1966 *Briefe* [Նամակներ], Suhrkamp, Frankfurt a. Main, 1966, երկու հատոր:
- 1992 «Notizen zu einer Arbeit über die Kategorie des Gerechtigkeit» [Նշմարներ արդարութեան ստորոգութեան շուրջ աշխատանքի մը համար], in *Frankfurter Adorno Blätter*, 4, 1992.

### Horst Bredekamp

- 1998 «Von W.Benjamin zu C. Schmitt», in *Deutsche Zeitschrift für Philosophie*, 46.

### Carl Schmitt

- 1921 *Die Diktatur* [Բռնապետութիւնը], Duncker und Humblot, München-Leipzig.
- 1922 *Politische Theologie* [Քաղաքական աստուածաբանութիւն], München.
- 1928 *Verfassungslehre* [Սահմանադրութեան մասին], Duncker und Humblot, München-Leipzig.
- 1931 *Der Hüter der Verfassung* [Սահմանադրութեան պահապանը], Mohr, Tübingen.
- 1995 *Staat, Grossraum, Nomos* [Պետութիւն, միջազգային տարածք, Nomos], Duncker und Humblot, Berlin.

### Jacob Taubes

- 1987 *Ad Carl Schmitt. Gegenstrebige Fügung* [Քարլ Շմիթի մասին: Հակամարտ համաձայնութեամբ], Merve, Berlin.

### Hansjörg Viesel

- 1988 (Խմբագիր) *Jawohl, der Schmitt. Zehn Briefe aus Plettenbug* [Այո, Շմիթը: Տասը նամակ Պլեթենբուգէն], Support, Berlin.

**Samuel Weber**

1992 «Taking exception to decision. W. Benjamin und C. Schmitt» [Որոշումէն քացառուիլ: Վ.Թ. Եւ Ք.Շ.], in U. Steiner (խմբագիր), *Walter Benjamin*, Lang, Bern.